Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան 02 ապրիլի 2021թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի մարտի 30-ի N 04-Լ որոշումը և ղեկավարվելով 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ կայացել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նիստ:

Կառավարման խորհրդի նիստին մասնակցել են.

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Քվեարկությանը չի մասնակցել	
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին:

(Ա. Ասոյան)

2. «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին:

(Ա. Ասոյան)

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում իրականացված ստուգումների և դիտարկումների վերաբերյալ:

(Գ. Հասրաթյան)

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Քվեարկությամբ Խորհուրդը"

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի աշխատակարգ:

Միաձայն

Հավանություն տալ՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծին:

Միաձայն

Ընդունվեց ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականի առաջին եռամսյակում իրականացված ստուգումների և դիտարկումների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գործունեությանը վերաբերող այլ հարցեր"

Խորհրդի դիտարկումները.

Խորհրդի նախագահի կողմից հարց բարձրացվեց,թե ինչ արդյունավետ վերահսկողական գործունեություն է իրականացվել և իրականացվում Սևանա լճից թարմ բռնված և ձկնկիթով Սիգ ձկնատեսակի նկատմամբ, քանի որ Տեսչական մարմինը համապատասխան ոլորտում վարչարարություն և վերահսկողություն իրականացնող մարմինն է:
Տեսչական մարմնի ղեկավարը նշեց, որ համապատասխան միջոցառումներ իրականացվել և իրականացվում են, այդ թվում՝ իրավապահ մարմինների հետ համատեղ:
Խորհրդի նախագահի կողմից բարձրացվեց նաև Արաքս գետի ավազանից ավազի անօրինական արդյունահանման հարցը, ինչին վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարը հավելեց, որ կատարվել են որոշակի գործողություններ, սակայն հարցը գտնվում է կրիտիկական վիճակում, ուստի պետք է հսկողությունն էլ ավելի ուժեղացնել:
Տեսչական մարմնի ղեկավարը վերոնշյալ հարցի կապակցությամբ մատնանշեց, որ թեև տնտեսվարողները պատճառաբանում են հեղեղումները, այնուամենայնիվ կատարվել են չափագրումներ, իրականացվում եմ բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ստուգման աշխատանքներ: Այս պահի դրությամբ արդյունքներն ամփոփման փուլում են, ինչի ավարտից հետո գրավոր տեղեկատվություն կտրամադրվի:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետի պարտականությունները
ժամանակավորապես կատարող (խորհրդի քարտուղար) _____ Հ. Սիրունյան